ՆՈՐ-ԴԱՐ

№ 154 ՏԱՍՆԵՒՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ Հինգշաբթի, 11 Հոկտեմբերի 1901 Հինգշաբթի, 11 Հոկտեմբերի ՏԱՍՆԵՒՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 154

Տարեկան 10 րուբլի, վեց ամիսը՝ 6 րուբլի, երեք ամիսը 3 ր.50 կ., ամիսը՝ 1 ր., հատով 5 կ.
Բաժանորդ են գրւում Թիֆլիսում միմիայն խմբագրատանը։

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ, Редакція „Норъ-Даръ“ կամ Tiflis, Rédaction „Nor-Dar“

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի մեծ օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւնները ընդունւում են ամեն լեզուներով։ Յայտարարութիւնների բառին 2 կ., րեկլամների համար կրկնապատիկ։

ՄԱՄՈՒԼ

ՏՊԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ կարգադրիչ-լիազօրների խորհուրդը ծանուցանում է ի գիտութիւն ընկերութեան անդամ գրուողներին և անդամ դառնալ ցանկացողներին, որ սոյն հոկտեմբերի 6-ից նշանակուած է առաջին՝ 10% վճարը, այսինքն իւրաքանչիւր փայից՝ 10 րուբլի։

Թիֆլիսում կարելի է 10% վճարը մտցնել պ. Զաքարիա Դրիգորեանցի (Կովկասեան) գրավաճառանոցում (Ալէքսանդրեան այգու դիմացը) և պ. Ստեփան Դովլաթեանցի մագազինում (Խալաբինսկի պրոսպեկտի վրայ)։ Օտար քաղաքներից և գաւառներից պէտք է ուղարկել «Նոր-Դար»-ի հասցէին՝ Тифлисъ, въ контору газеты „Нор-Даръ“ (754) 10—2

ԲՈՂԱՆԱԳՈՒԹԻՒՆ

Բարձրագոյն անձերի հեռագրեր։
Ք ր ո ն ի կ ո ն.— Լուրեր։
Մեզ գրում են.—Թ. Խ. Ը.բայից։
Սերգեյի պատրաստելու եղանակը և արտահանութիւնը։
Նամակ խմբագրութեան։
Պատկեր Հռենոսի հովտում,
Քաղաքական.— Թիւրքիա։ Անգլիա։
Հեռագրական լուրեր։
Նամակ խմբագրութեան։
Բ ա ն ա ս ի ր ա կ ա ն.— «Արարատ» բառը ս. Գրքում։ Մանկան մահը։
Յ ա յ տ ա ր ա ր ո ւ թ ի ւ ն ն ե ր։

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԱՆՁԵՐԻ ՀԵՌԱԳՐՆԵՐ

Վրաստանը Ռուսիայի հետ միացութեան հարիւրամեայ յոբելեանի առթիւ, Թիֆլիսի նահանգի ազնուականութեան պարապմունք իշխան Դ. Զ. Մելիքովը, «Կաւկազ»-ի ասելով, արժանացել է ստանալ հետեւեալ հեռագրները.

Նորին Կայսերական Մեծութիւն Թագաւորի Կայսրուհի Ալէքսանդրա Ֆեօդորովնայից Սպալայից.

«Սրտագին շնորհակալ եմ Թիֆլիսի և Քութայիսի նահանգների ազնուականութեանը Վրաստանի միացման հարիւրամեակի տօնակատարութեան առթիւ ինձ արտայայտած զգացումների և բարեմաղթութիւնների համար։ Մեծ հետաքրքրութեամբ հետեւում եմ ես տօնուող անցքի հանդէսներին։ Մտովին միանում եմ վրացի ազգի՝ իբրեն մայրենի երկրի բարօրութեան համար արած աղօթքներին։

ԱԼԷՔՍԱՆԴՐԱ»։

Նորին Կայսերական Մեծութիւն Թագաւորի Կայսրուհի Մարիա Ֆեօդորովնայից Բերնստորֆից.

«Խորապէս զգացուած եմ ձեր և իշխան Լորդկիպանիձէի ինձ ուղարկած հեռագրի մէջ արտայայտուած զգացումների համար։ Ողջունելով Թիֆլիսի և Քութայիսի նահանգների ազնուականութեան այսքան ուրախալի օրուայ յոբելեանի համար, ուղարկում եմ ինձ համար թանկագին Կովկասին բարգաւաճութեան և կատարեալ բարգաւաճման սրտագին ամենալաւ բարեմաղթութիւնները ի վառս և յուրախութիւն մեր սիրեցեալ հայրենիքի։

ՄԱՐԻԱ»։

Բաթումից, Նորին Արքայական Մեծութիւն յունաց Թագուհի Օլգա Կոնստանտինովնայից.

«Հեռանալով հրաշալի և հիւրասէր Կովկասից, խնդրում եմ ազնուականութիւնը յայտնէք իմ խորին և սրտագին շնորհակալութիւնն այն սիրալիր ընդունելութեան, որն անասելի կերպով զգացրել տւին ինձ։ Ձեր մէջ անցկացրած օրերն երբէք չեն ջնջուիլ իմ յիշողութիւնից։

ՕԼԳԱ»։

Բորժոմից Նորին Կայսերական Բարձրութիւններ Մեծ Իշխան Գէորգի Միխայլովիչից.

«Բորժոմի վերադառնալով, մենք յանձնեցինք այն սուրբ պատկերը, որով Թիֆլիսի ազնուականութիւնն օրհնեց մեր Դուստր Նինային։ Խորապէս զգացուած լինելով Թիֆլիսի ազնուականութեան ուշադրութիւնից, մենք խնդրում ենք ձեզ կրկին անգամ յայտնէք մեր անկեղծ շնորհակալութիւնն ամբողջ ազնուականութեանը, այլ և այն ուշադրութեան համար, որ ցոյց տրուեց մեզ հիւրասէր Վրաստանի մայրաքաղաքում մեր այնտեղ եղած բոլոր միայման ուրախալի հանդէսօրերին։ Այդ օրերն անմոռանալի կըմնան մեզ համար։

ԳԷՈՐԳԻ, ՄԱՐԻԱ»։

Բորժոմից, Նորին Կայսերական Բարձրութիւն Մեծ Իշխանադուստր Ելենա Վլադիմիրովնայից.

«Սրտանց ուրախ եմ, որ իմ առաջին անգամ հրաշալի Կովկաս գալս զուգադիպեց Վրաստանի համար նշանակալից օրերին. խնդրում եմ ձեզ ընդունեցէք և և յայտնեցէք վրաց ազնուականութեանն իմ անկեղծ շնորհակալութիւնն այն ճշմարիտ սիրալիր ընդունելութեան համար, որն առ միշտ անջնջելի տպաւորութիւն կըթողնի իմ մէջ։

ԵԼԷՆԱ»։

Կայսրութեան ներքին նահանգների ազնուականութեան Թիֆլիսում հիւր եղած պարագլուխների համար ազնուականութեան սարքած ճաշի ժամանակ Թիֆլիսի նահանգի ազնուականութեան պարագլուխ իշխ. Դ. Զ. Մելիքովը բարձրագոյն անձերին ուղարկած հեռագրներին ի պատասխան արժանացաւ ստանալ հետեւեալ հեռագրները.

Բորժոմից, Նորին Կայսերական Բարձրութիւն Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլայևիչից.

Բորժոմից, Նորին Կայսերական Բարձրութիւն Մեծ Իշխան Գէորգի Միխայլովիչից.

«Մեծ Իշխանուհի Մարիա Գէորգիևնան և ես խորապէս զգացուած ենք ձեր հեռագրից և սրտագինս շնորհակալ ենք Թիֆլիսի մեր բոլոր համերկրացիներից մեզ ցոյց տրուած ուշադրութեան համար։

ԳԷՈՐԳԻ»։

Բորժոմից, Նորին Կայսերական Բարձրութիւն Մեծ Իշխան Նիկոլայ Միխայլովիչից.

«Սրտանց շնորհակալ եմ Թիֆլիսի ազնուականութեան ինձ համար թանկագին ուշադրութիւնից և յոյս ունիմ դեռ ևս շատ տարիներ մասնակից լինելու նրա հետ միմիայն ուրախութիւնների։

ՆԻԿՈԼԱՈՍ ՄԻԽԱՅԼՈՎԻՉ»։

Միխայլովկայից, Նորին Կայսերական Բարձրութիւն Մեծ Իշխան Սերգէյ Միխայլովիչից.

«Անկեղծ շնորհակալ եմ հեռագրի համար. մեծ հետաքրքրութեամբ հետեւելով անցած օրերի բոլոր տեղեկութիւններին հայրենիքից հեռու, մտովս միացած եմ ձեզ ամենիդ հետ։

ՍԵՐԳԷՅ»։

ԲՐՈՆԻԿՈՆ

Նորին Կայսերական Բարձրութիւն Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլայևիչը երեկ ե. րեկոյեան, հոկտեմբերի 10-ին, արա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

«ԱՐԱՐԱՏ» ԲԱՌԸ Ս. ԳՐՔՈՒՄ

(Վ ե ր ջ *)

Ուրարտու=Արարատ անուան առաջին անգամ պատահում ենք Ասսուրբանիբալի 930-ին գրել տուած Մենաքուրի (monolithinschrift) արձանագրութեան մէջ. առաջ այս երկիրը համարում էր Նաիրիի մի մասը։ Սարաուրիի յաջորդները անուանում են ասոր. Ուրարդուն տեղական բարբառով Բիայնա կամ Եսալտիա։ Իրենց պատերազմասէր թագաւորների չնորհիւ ուրարդեցիք տարածում են իրենց իշխանութիւնը դէպի ամեն կողմ և խլում են ասորեստանցիներից հին Նաիրիի մեծագոյն մասը։ Ի հարկէ չուտով երկու հզօր հարևանների մէջ կռիւն անխուսափելի է դառնում, Ուրարդիին ամենամեծ հարուած տալիս են Տիկլատ-պիլեզար III (743—727), և Սարգոն (705—681), որոնք մինչև երկրի սիրտը թափանցում են և նրա ամբողջ հարաւային քաղաքները գրաւում։ Ահա այս ժամանակներն են երևում մեր նահապետները և նուաճում թուլացած ուրարդեցիներին կամ քաղդէացիներին և մնացորդներին դէպի սարերը քշում, բայց իրենք ևս ընկճւում են մարերից և ապա ընկնում պարսից իշխանութեան տակ (Küpert. էջ 79. Hübschm. Arm. Gramm s. 405. Streck. և այլն)։ Այս ենթադրութեան իրը հիմք ծառայում է նաև այն հանգամանքը, որ Հայաստան բառը «Արմինա» կամ «Արմինիգիս» պարսիկ ձևով առաջին անգամ այս ժամանակ է յիշւում պարսից արձանագրութեանց մէջ։ Վէբերի կարծիքով, առաջին անգամ Տիգրան մեծն է 90 թուին տիրում ամբողջ Հայաստանի վրայ. 66 ին յ. Ք. Տրդատ Ա. հիմնում է Արշակունեաց հարստութիւնը։

Այս բոլորից յետոյ պարզ է, որ Արարատ անուան տակ չի կարելի միշտ մի որոշ սահմանով երկիր հասկանալ, այլ ամեն անգամ յիշատակութեան հնութիւնը և Արարատի գարպացումը ի նկատի պէտք է ունենալ։

Շատ արդարացի կերպով ս. Գրքի Թարգմանիչներն Արմենիա են թարգմանում «Արարատ» բառն այնպիսի դէպքերում, երբ նա մի աշխարհագրական նշանակութիւն ունի, ինչպէս օր. Վուլգաթեան Ծննդ. Ը, 4. Եսայի ԼԷ, 37., և ընդհակառակը քաղաքական դէպքեր յիշելիս Արարատ են թողնում (երեմիա. ԾԱ, 27)։ Յունարէն և ասորերէն թարգմանութիւններն ևս այս ենթադրութիւնը կատարելապէս արդարացնում են։ Հայերէնը Ծննդ. Ը, 4 ում Արարատ բառը պահելով լուծում է դրական մարքով այն խնդիրը, թէ Արարատ=Armenia յինւ Եսայի ԼԷ, 38 «ի Հայս» միայն աշխարհագրական տեսակէտից է ուղիղ։ Աւելի ուղիղ է նոյն տեսակէտից Տոբիասի Ա. 24. «ի լերինս հայոց»։ Երեմիան և Թագաւորաց Դրքերը ամենայն իրաւունքով պահում են Արարատ բառը։

Բայց ս. Գրքի աստուածաբան մեկնիչները դրանով միայն չեն բաւականանում, նրանք ձգտում են նաև բառիս հնախօսական նշանակութիւնը մանրազնին բացատրել։

Ամենից առաջ ի նկատի պէտք է ունենալ, որ Արարատ միմիայն ամբողջ Հայաստանին կամ նրա մի նահանգին հատասար չէ. նա ուրարդեցիների երկիրն է, որի սահմանները նրանց իշխանութեան հետ աճում, ընդարձակւում կամ նուազում են։ Եսայի ԼԶ. 37., Ի. Թագ. ԺԹ. 37., Տոբիաս Ա. 21-ում Արարատ նշանակում է այն Թագաւորութիւնը, որը Տիկլատ-Բելիզարից և Սարգոնից յալթւում է և ստիպւում է ամբողջ Նաիրին (որը համապատասխանում է բալձր և կեդրոնական Հայաստանին Արաքսի միջին հովտով) նրանց թողնել։ Իսկ Ծննդոց Դրքի կոչումը բացատրելու համար ի նկատի ունենանք, որ ուրարդեցիք ժամանակի ընթացքում նուաճում են ամբողջ այժմեան Արարատը և իրենց անունով կոչում են իրենց խլած և բնակած երկիրը։ Տիկլատ Բելիզարի արձանագրութեանց մէջ Ուրարդու անուան տեղ յիշւում է Դաւտի կամ աւելի ուղիղ և հին Կողու, որը Կորդուաց չատ նման է հնչում։ Այս պատճառներով Մասիսը=Արարատին սխալ է համարում Վէբերը, և Նոյեան տապանի նրա վրայ հանգչելու աւանդութիւնն ուշ ժամանակի յօրինուածք։

Մենք խօսեցինք հայոց մօտ եղած ջրհեղեղի աւանդութեան մասին. պրոֆ. Վէբերը հաւանական է համարում, որ այդ աւանդութիւնը հայերն իրենց հետ բերած լինին։ Ո'չ Հիերոնիմոսի վկայութիւնը (Մեկն. Եսայ. էջ 389.) և ո'չ երկրաբանական, աշխարհագրական, տեղագրական ապացոյցները (Kirchenlexicon-Harzeg. Realencyclop. I. Aufl. X. 398. Parrot. Reise Zum Ararat. Berlin. 1834.) չեն ապացուցանում, նրա կարծիքով, Ս. Գրքում յիշուած Արարատի և Մասիսի նոյնութիւնը։ Ապա Վէբերը ճգնում է հայկական աղբիւրների վրայ հիմնուած ապացուցանել, որ այդ աւանդութիւնը մեր ոսկեդարին անծանօթ է և ընդհակառակը մեր պատմագիրներից մի քանիսը Կորդուաց սարն են համարում Նոյեան տապանի իջավայրը, և որ առաջին անգամ Յակոբ Մծբնացու կենսագիրն է 11—12 դարում կասկած յարուցանում տապանի Կորդուաց սարերի վրայ հանգչելու աւանդութեան դէմ (Սիփերք Հայկ.) և այս ժամանակից սկսած պետով է պառնում Մասիսի աւանդութիւնը։ Նոյնը ցոյց են տալիս մեզ ճառընտիրները (11—12), Յովհան Երզնկացին (13)։ Ինչպէս որ յունաց ազդեցութեան տակ Այրարատը Հայաստանի, նոյնպէս և նոյնանուն սարը՝ Մասիսի իմաստն է ստացել և Ջրհեղեղի աւանդութիւնը նրա հետ կապակցուել։

Ոչ միայն հայ և օտար հեղինակները, ինչպէս օր. Հիերոնիմոս (Lib. de situ et nominibus M. 23. էջ 859), Եւսեբիոս (Praep. evang. IX. 12. M. 21. էջ 699· և Մեկն. Եսայ. M. 24. էջ 353) համարել են Կորդուաց սարը Նոյեան տապանի իջևանը։ Միւս բոլոր յոյն և ասորի հեղինակները տեղաւորում են ս. Գրքի սարը Հայաստանում, բայց ոչ մի տեղագրութիւն չեն տալիս և երբեմն նոյն իսկ Կորդուք, Հայաստան և Արարատ չփոթում են, ինչպէս օր. Եփրեմ ասորին (Opera. ed. Pat. Bened· Romae. 1750. II. էջ 82. 161. I էջ 560)։

Եթէ այս բոլորից յետոյ մենք ի նկատի ունենանք, որ Արարատն առաջ մի երկրի անուն է, որը Վանից դէպի հարաւ և արևելք տարածուած է եղել և ապա իւր բնակիչները նրա սահմանները այնքան ընդարձակել են, որ նա ամբողջ Հայաստանի անունն ու նշանակութիւնն է ստացել (յոյների մօտ գլխաւորապէս) և որ վերջապէս նոր եկած հայերից, ուրարդեցիների վերջին կայարանի իրը նրանց վերջին ընդդիմադրութեան տեղի անունով՝ նահանգի անուն է ստացել, այն ժամանակ ոչ մի կարիք չենք ունենալ հրէաների և ասորինելի Կորդու աւանդութեան և ս. Գրքի մէջ հակասութիւն տեսնելու, քանի որ երկուսն ևս նոյն երկրամն են եղել։ Ընհասարակ ամեն տեսակի աշխարհագրական-պատմական թիւրիմացութիւն կը վերջանայ ըստ Վէբերի, եթէ Մասիս=Արարատի որոշումը անճիշտ համարուի։

Թէ որքան հին է Ծննդ. Դրքի Արարատին տուած այս նշանակութիւնը դեռ

*) Տես «Նոր-Դար» № 152.

հետ պետքով հորմոլոգ ժամանց ֆիլիալ և ճանապարհ շոգեքարշ հա-շվարկով Գնալ-Գնալ ինժեներ Գնդի հրամանով հորմոլոգ ինժեներ Գնդի հրամանով հրամանատարությունը հրամանատարությունը հրամանատարությունը

ԾԱՄԱՆ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՀԱՅԵՐԷՆ ԱՌԱՍՊԵԼՆԵՐ

Ընտրախտիվ առաջնորդներ, որոնք ոչ միայն հեղ տարօրինակ գաղափարներ են տարածում, այլև ամենայն ջանքով ձգտում են իրենց նպատակին հասնել ամենաանբարոյական միջոցներով, ամենուրեք կան։ Ամերիկայում նրանք կոչվում են «Boss», Ֆրանսիայում՝ «meneur», Անգլիայում՝ «Wire-puller», Գերմանիայում՝ «Drahtzieher», Իտալիայում՝ «Mestatore», Ռուսաստանում՝ «Заводила», Թուրքիայում՝ «Ղոչաղ»։ Ամենուրեք էլ նրանք ունեն մի ընդհանուր գիծ, որ նրանց միացնում է իրար հետ, այդ գիծը ընտրողների շահագործումն է։ Ամենուրեք էլ նրանք ունեն մի ընդհանուր նպատակ, որ է՝ ընտրողների ձայները ստանալ։ Ամենուրեք էլ նրանք ունեն մի ընդհանուր միջոց, որ է՝ ստորություն։

Ֆրանսիայում ընտրական շրջանները շատ մեծ են, ուստի և ընտրողների թիվը շատ մեծ է։ Ընտրողների մեծ մասը ոչ մի կապ չունի քաղաքական կուսակցությունների հետ, ոչ մի կապ չունի ընտրական պայքարի հետ։ Ընտրողների մեծ մասը

բայց որովհետև Դևետը, սակայն, վերջին օրերս կատարեալ անգործունէութիւն էր ցոյց տալիս, այդ պատճառով այդ լուրերի ստուգութիւնն աւելի ու աւելի հաւանական է դառնում:

— Հաստից հետագրում են, թէ բոէր պատուիրակութիւնը ոչ մի տեղեկութիւն չի ստացել, որով կարող լիներ ստուգել Դևետի ժամուան լուրը: Բոէր պատուիրակները հաւատ չեն ընծայում յիշեալ լուրին, Դևետի անգործունէութիւնը վերագրում են ուրիշ պատճառների:

— Պրետորիայում հոկտեմբերի 2 ին հրատարակուած է Հարաւային Աֆրիկայից աքսորուելու դատապարտուած գերի բոէր պարագլուխների նոր ցուցակ: Այդ ցուցակն իւր մէջ պարունակում է 12 անուն, որոնց թւումն է Շեպերսը:

— Պեկինի կառավարչական բարձր պաշտօնեաները տեղեկութիւն են ստացել, թէ պրինց Ցինը կրդիմաւորի կայսրուհուն Գայֆինում, որտեղ ընդհանուր խորհրդակցութիւն տեղի կունենայ պետական գործերի վերաբերմամբ: Մինչև այդ ժամանակ դահաժառանգ կընշանակուի: Ասում են, թէ կայսրուհու թեկնածուն Թունի եղբօր որդին է՝ ԼունՔէյձի: Ռեֆորմների կուսակցութիւնը դէմ է այդ ընարութեանը և կարծում է, որ պետութիւնները նոյնպէս կդիմադրեն, եթէ կայսրուհին պնդի ԼունՔէյձիի թեկնածութիւնը:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Մեծարգոյ պ. Խմբագիր,

Որովհետև պատուական «Նոր-Դար»-ի № 145-ում Ախալցխայից հաղորդուած լուրը, որ վերաբերւում է քաղաքիս բնակիչ պ. Ղ.-ի որդու կատարած սխրագործութեանը, շատերն (այնպէս և ինքը պ. Ղ-ը) ինձ են վերագրում, խընդրում եմ, թոյլ տաք ինձ յայտնել ձեր պատ. լրագրի միջոցով, որ այդ լուրը հաղորդողը ես չեմ:

Ձեզ ի սրտէ յարգող
Աւետիս Ասլանեանց
Ախալցխա, 4 հոկտ.

Խմբագիր հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՎՐԱՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՆԵՐԻ ԹԱՏՐՈՆ

Կիրակի, հոկտեմբերի 14-ին

Հայ դերասան. դրամատիկ ընկերութիւնը

Մասնակցութեամբ տիկին ՍԻՐԱՆՈՇՇԻ

Կը նեբայացնէ

ԹԱԳԻ ՀԱՄԱՐ

դրամա 5 գործողութ., հեղ. Ֆ. Կոպպէի

Թարգմանութիւն Մ. Մանուչարեանի

Մասնակցում են 60 անձինք և երաժշտական խումբ:

Սկիզբը ժամը ճիշտ 8-ին:

Տեղերի գները սովորականն են:

(756) 2—1

ԳԱՏՄՈՒԹԻՒՆ ՆՈՐ-ՋՈՒԼՂԱՅԻ

I և II հատոր, 497 և 317 էջերից: Աշխ. *Յար. Թ. Տէր-Յովհաննէսեանցի*

Տպուած է 1880 և 1881 թուին: Վաճառւում է երկու հատորը միասին: Գինն է ճանապարհածախսով 2 րուբլի կամ 5 ֆրանկ.

Դիմել Tigran T. Abgarian, Julfa-Ispahan (Perse) 5—4
(0)

Վաճառւում են

„ԱԶԳԱՍԷՐ“

լրագրի բոլոր հատորները, իւրաքանչիւր տարուանը 10 րուբլի, ճանապարհածախսով:

Դիմել՝ École Centrale Arménienne
(0) Julfa Ispahan. (Perse) 5—4

ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖԼՈՐԱ ԵԱԿՈՎԼԵՒՆԱ

ԲՐՈՆ-ՓՈՆ-ԲՐԵՆՆԵՐ

Ընդունում է առաւօտեան ժ. 9—2, երեկոյեան ժ. 4—7

Թիֆլիս, Միխայլովսկայա, № 71.

(471) 50—18

Բարձր դասակարգի կանայք ինչպէս և պեղեցկութեամբ ամենանրբանաւոր դերասանուհիները հրաժարուել չեն գործածել ԿՈՁԼԴ ԿՐԵՄ (Cold Creme), որ դառնահամ է և իւղալի տեսք է տալիս դէմքին: Դրա տեղ նրանք գործ են ածում

CREME SIMON

(Կրեմ-Սիմոն) գեղեցիկ հոտ ունեցող արտադրութիւնը, որ երբէք չի փչանում և պնդացնող ու փափկացնող յատկութիւնների հետ միասին առաւելութիւն ունի պահպանելու դէմքի գոյնի շնորհալիութիւնն ու երիտասարդական թարմութիւնը:

LA POUDRE SIMON

(Պուդր Սիմոն) Le savon à la Creme Simon (Օճառ Սիմոնի) ունին նոյն հոտը և լրացնում են նրա պարմանալի յատկութիւնները:

J SIMON, 13 rue Grande Batèliere. Paris. *Մաս-մաս վաճառւում է վարսավէրների, պարֆիւմերների և դեղագործների մօտ:*

(M.) № 136953. 18—2

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԹԱՐՄՈՒԹԻՒՆ

յարմարեցրած նորուսների համար

Գինը՝ 15 կոպէկ է.

50-ով առնողին 20% զիջում:

Դիմել՝ Армавиръ (Куб. обл.) Регенту Симону Шаанянцъ

(0) 5—5

ԿԱՊՍԻԼՆԵՐ ՄԱՏԻԿՈՅԻ

[Capsules au Matico]

ԳՐԻՄՈ ԵԻ ԸՆԿ. ԴԵԿԱԴՈՐՆԵՐԻ

Թոյլ է տրուած Ռուսիայում:

Անյաղթելամբ գործ է ածւում հոնորէի բժշկութեան ժամանակ, երբէք չյոգնեցնելով ստամոքսը, ինչպէս այդ լինում է, երբ գործ է ածւում կոպայի բալզամը հեղուկ ձևով:

Париж, 8, Rue Vivienne և գլխաւոր դեղատներում:

(M.) № 7728 23—17

ԿԱՐԵՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՄԱՍԵՐԻ

ՊԱՀԵՍՏ

Ֆ. ԳՈԼԾՄԱՆԸ

Варшава, Новолипье, 4.

Պրէյս-կուրանտները ձրի: Խորհուրդ եմ տալիս փորձի համար պատուէրը տալ:

(M.) № 130514 6—6

Մամուլի տակ է և շուտով լոյս կտեսնի առանձին գրքով

ՆԱՐԴՈՍ

ՍՊԱՆՈՒԱԾ ԱՂԱՒՆԻՆ

վիպակ (0) 3—1

ԱՒԵՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

ԵՐԿՈՒ ՄԵԾԻ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ

ՏԱՆՆԵՒԻՆՆԵՐԴ ՏՈՒՐ

Առևտրական կուրսերի նպատակն է մասնագիտական առևտրական կրթութիւն տալ երկու սեռի անձանցը և պատրաստել գործնական ճանապարհով հմուտ հաշուապահներ: Աւարտողներն ստանում են առտեստատներ:

Աւանդելի առարկաները սրանք են. 1) Առևտրական Տնտեսութիւնը 2) Առևտրական Թուաբանութիւն, 3) Հաշուապահութիւն (պարզ կրկնակի և բանկային), 4) Թուաբանութիւն համրիչի վրայ, 5) Առևտրական թղթակցութիւն, 6) Առևտրական և մուրհակի կանոնագրութիւն և 7) Դեղագրութիւն (վատ ձեռքի почеркъ ուղղելը): Ուսումն սկսուած է սեպտեմբերի 15-ից: Ընդունելութիւնները, սեպտեմբերի 1 ից, ամենայն օր, առաւօտեան 10-ից մինչև 11 ը և երեկոյեան 4-ից մինչև 8 ժամը, կուրսերը հիմնողի բնակարանում Սոլոլակում, Ալէքսանդրը Փրիդոնովի տանը, № 9, Լերմոնտովսկայա փողոցում: Ծրագիրն ու կանոնները կարելի է ստանալ **ԶՐԻԱՊԷՍ** եղը. Յովհաննովների բանկային գրասենեակում և կուրսերը հիմնողի տանը. ъ Тифлисъ, С. П. Мануэльянцу. 25—22
(650)

ԲՐԱԿԱՐ ԵԻ ԸՆԿ.

ԱՌԱՋԱՐԿՈՒՄ Է

Առաջի Հայանեխական էլէքսիր

„ՍԱԼՈԼ“

(M.) 95174. *Սրուակը 75 կոպ.* 10—3

ՊԱՏԱՀԱԿԱՆ ԻՐԵՐ

Ծախւում են գործածուած, նոր և բոլորովին դուրս կանգնած կահկարասիք, տուն կահաւորելու իրեր, բրոնձ, սաղք, ոսկի, թանկագին քարեր: Москва, Неглинный проѣздъ, пассажъ Солодовникова рядомъ съ Абрикосовымъ. *Մոսկուա, Սոլոդովնիկովի պասսաժ մուտքը Նեգլինից:*

(M.) 8514 23—15

(M.)90634 52—52

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

սրանով յայտարարում է ի գիտութիւն ընդհանրութեան Թիֆլիս քաղաքում չներից տուրք առնելու կանոնները, որոնք հաստատուած են ներքին գործերի մինիստրութեան կողմից, ֆինանսների մինիստրութեան համաձայնութեամբ:

1. *Տուրքի ենթարկւում են քաղաքի սահմաններում պահուող բոլոր չները, առանց ցեղի խտրութեան, բացի՝ ա) այն չներից, որոնք պատկանում են Խարձրագոյն Ընդունիքի մօտ պաշտօն ունեցող օտարերկրեայ դիւանագիտական ներկայացուցիչներին և դեսպանատների ու առաքելութիւնների կազմի մէջ մտնող այլ անձերին, նմանապէս և ընդհանուր-հիւպատոսներին, հիւպատոսներին, փոխ հիւպատոսներին և հիւպատոսական գործակալներին, որոնք հպատակ են այն պետութեան, որից նրանք նշանակուած են, եթէ սոյն պետութեան հետ Ռուսիան հիւպատոսական իրաւունքների վերաբերմամբ պայմանագիր է կնքել, կամ եթէ այդ պետութեան մէջ նոյնպիսի արտօնութիւն է տրուած ռուսաց հիւպատոսներին. բ) բակի-շղթայական չներից. գ) այն չներից, որոնք պատկանում են ժամանակաւորապէս քաղաքում գտնուող անձերին, եթէ այդ անձերը քաղաքում մնում են մի ամսից պակաս և դ) այն չներից, որոնք պահւում են զինուորական որսորդական զօրախմբերի մէջ, այլ և որոնք պահւում են որսի նպատակներով կամ գործադրելու զինուորական ծառայութեան համար զինուորական միւս զօրախմբերի և այն սպաների մօտ, որոնք ծառայում են բուն զօրքերի մէջ, շաբաներում և վարչութեանց մէջ, պայմանով, որ այդպիսի չները հրամանի մէջ գրուած լինին համապատասխան զօրամասի վրայ:*

2. *Իւրաքանչիւր չան վրայ տարեկան տուրք նշանակւում է 1 րուբլի:*

3. *Չան տէրերը տարեկան տուրքը վճարում են առաջուց. ընդամին առանց տուգանքի վճարման համար արտօնեալ ժամանակամիջոց է նշանակւում իւրաքանչիւր տարուայ մարտի 1-ը:*

4. *Իւրաքանչիւր չան տիրող քաղաքային վարչութիւնից տրւում է նշան, որի վրայ նշանակուած է լինում տուրքի վճարման անդորրագրի համապատասխան թուահամարը: Առանձին նշանները են տրւում նմանապէս այն չների համար, որոնք պատկանում են I յօդուածի ա) և դ) պարագրաֆների մէջ յիշուած անձերին և զօրամասերին, որոնցից առնւում է միայն նշանների արժէքը: Նշանները կպցնւում են չների վզակապերի վրայ նկատելի տեղում և չների հետ միասին կարող են յանձնուել նոր տէրերին, եթէ այդ չները ծախուելու լինին:*

5. *Երբ չան տէրը յայտնէ, թէ նշանը կորած է, քաղաքային վարչութիւնից կըստրուի նոր նշան և կառնուի արժէքը միայն:*

6. *Յարուայ ընթացքում չուն ձեռք բերողը պարտաւոր է տասնօրս օրուայ ժամանակամիջոցում այդ մասին յայտնել քաղաքային վարչութեանը և վճարել տուրքն ամբողջովին կամ կէսը, նայելով թէ չունը երբ է ձեռք բերուած — առաջին թէ երկրորդ կիսամեակում:*

7. *Տուրքը վճարելու պարտաւոր եղող անձերը, եթէ տուրքն անկանոն վճարեն, բացի չվճարուած տուրքը վճարելուց, ենթարկւում են ապառիկ մնացած գումարի 10% պենիի:*

8. *Տուրքի վճարման սահմանուած ժամանակամիջոցի և տեղի մասին քաղաքային վարչութիւնը յայտարարում է ոչ ուշ, քան յիսնեալ ժամանակամիջոցը լրանալուց մի ամիս առաջ:*

9. *Փողոցներում և հրապարակներում առանց նշանի հանդիպող չները որսւում են այդ նպատակով քաղաքի ունեցած կապարառուի միջոցով: Բռնուած չները կարող են ազնիացուել հինգ օրից ոչ վաղ սկսած բռնելու օրից, երբ ընդամին այդ ժամանակամիջոցի ընթացքում չան տէրը չվճարի իրենց հասանելիք տուրքը, կամ չապացուցի, որ տուրքն արդէն վճարած է: Բռնուած չների տէրերից, քաղաքի օգտին սահմանուած տուրքից անկախ, վճար է առնւում չանը կերակրելու և խնամելու համար օրական 15 կոպ.:*

10. *Տուրքի ենթակայ բոլոր չների թիւը որոշելու համար, քաղաքային վարչութիւնն իրեն ենթակայ գործակալների միջոցով կազմում է, ոչ ուշ քան իւրաքանչիւր յարուայ յունուարի 1-ը, առանձին ցուցակներ և ապա, ոչ ուշ քան փետրուարի 1-ը, ուղարկում է չների տէրերին տուրքի լիցքերը:*

Մտցնելով ներկայումս այս տուրքը, քաղաքային վարչութիւնը նախապէս յայտարարում է չուն պահող անձերին, որ սոյն 1901 թուի տուրքը պէտք է վճարուի այժմ իսկ վճարման վերջին ժամանակամիջոցին, առանց տուգանքը հաշուելու, նշանակւում է սոյն յարուայ նոյեմբերի 10-ին: Այս ժամանակամիջոցն անցնելուց յետոյ, քաղաքային վարչութիւնը գործադրութեան կըմտցնի վերոյիշեալ կանոնների § 9-ը: Տուրքը պիտի յանձնուի առևտրական ոստիկանութեան գրասենեակներում, որոնք գտնւում են ոստիկանական 1 և 2-րդ քաղաքամասերի համար Վերայի հրապարակում, 3-րդ և 4-րդ քաղաքամասերի համար — Սալդաթսկի բազարում, 5-րդ և 6 րդ քաղաքամասերի համար — Սալդաթսկի բազարում, 7-րդ քաղաքամասի համար — Կախէթինսկայա հրապարակում, 8-րդ քաղաքամասի համար — Դեսիմոնովսկայա հրապարակում, 9 րդ և 10-րդ քաղաքամասերի համար — Աւճալեան հրապարակում, ջրմուղու պահպանի տնակում, իսկ Նախալովկայի համար — տեղական գործակալի գրասենեակում, Կազապարաւղնայա փողոցում, Իուլքսի տան մէջ: Այս բոլոր տեղերում գործակալները կըտան անդորրագրեր տուրքի վճարման համար և սոյն տարուայ համար սահմանուած նշանները: Ընդ սմին քաղաքային վարչութիւնը տուրքը վճարող անձերին խնդրում է նայել, որ իրենց տրուող անդորրագրերի վրայ անպատճառ նշանակուած լինի նաև նշանի №-ը, առանց որի անդորրագիրը վաւերական չի համարուի:

(755) 2—1

Дозв. цензурою Тифлисъ, 1901 октября 10-го дня Տպարան Ա. Ի. Պետրովի Типографія А. И. Петрова, Голов. пр., № 12 Телефонъ № 387